ԱԽԹԱՄԱՐ

(ԱԶԳԱՑԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Միծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Մոմն է մնում գաղտագողի
Ամէն գիշեր մի տըղայ։

Մոմն է մնում առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճեղքում, լող է տալիս
Դէպի կղզին դիմացի։

Խաւար կղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նրան,
Մի վառ փարոս նրա համար,
Զը մոլորի որ ճամբան։

Մթում է ծովն ալեծածան—
Մթում է սիրտը տըղի,
Գոռում է ծովն ահեղաձայն—
Նա կռւում է կատաղի։

Ոչ մի վտանգ նա չի հարցրել
Ոչ մի գիշեր մթնագին,
Միայն ճգնում է շուտով հասնել
Երևացող կըրակին։

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնպես կրակ է անում,
Եւ սպասում է անհամբեր
Այնտեղ-մոտիկ դարանում։

Մփում է ծոմն ալեծածան -
Մփում է սիրտը տըղի,
Գոռում է ծոմն ահեղաձայն —
Նա կուում է կատաղի։

Եւ Թամարը սրտատրոփ
Արդէն լսում է մոտիկ
Ձրի ճեղփիւն և ողջ մարմնով
Խանդից այրում է սաստիկ։

Լռեց յանկարծ... և ծովափին
Երևեցաւ մի ստեր...
Ահա և նա... իրար գոռան...
Կասկածաւոր լուռ գիշեր...։

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմիկ դիպչում ափերքին,
Հրհրբելով հեռանում են
Շշունչներով անմեկին։

Նրանք կարծես փըսփըսում են...
Եւ աստղերը կամարից
Միաբերան բամբասում են
Լիրբ, անամօթ Թամարից...

Բամբասում են կուսի սրտում...
Եւ դարձեալ մութ գիշերով
Մէկը խաւար ծովն է մտնում,
Միւսը ահից դողալով

Ծունկ է չոքում լուռ ծովեզրին
Եւ, ականջը խոնարհած,
Հետևում է ջրի ձայնին,
Որ հեռանում է կամաց...

Միւս գիշերը, նոյն ժամանակ,
Էլ նոյն կրակն է վառւում,
Եւ կըրակի շուրջը դատարկ
Էլ նոյն անդքն է կատարւում։

Բայց Թամարի հօր հարևան
Մի քանի մարդ չարասէր
Նրանց գաղտնիքըն իմացան
Եւ ամպամած մի գիշեր

Լոյսը հանգցրին. լողորդն յոգնած
Մոլորւեցաւ սև ծովում,
Երբոր նայեց, տեսաւ հանգած,
Փարոսն էլ չի երևում։

Լոյսը հանգցրին չար զիւղացիք
Եւ կանգնած են լուռ ու մունջ.
Դէպի ափերն այն ուղղաձիգ
Հեռւից հողմը դառնաշունչ
Բերում է ձայն կիսամար—
«Ա՛խ Թամար...»

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
Ժայռերի տակ սեպացած,

Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած
Մերթ լսում է ուժասպառ —
«Ա՛խ Թամար...»

Առաւօտեան ծովը ծփաց
Ափը ձգեց մի դիակ.
Նորա դէմքը այլանդակուած
Կարծես մեռած ժամանակ
Մրմնջում էր անբարբառ —
«Ա՛խ Թամար...»։

Այն օրանից դրա համար
Կղզին կոչուեց «Ախթամար»։

1891 Թ., դեկտեմբերի 11։